«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտում և ուսումնադաստիարակչական աշխատանքների ճշգրիտ կազմակերպում։

Դաստիարակ՝ Ալվարդ Ղազարյան

Հասատատություն՝ «Այգեհովիտի մանկապարտեզ» ՀՈԱԿ

Իջևան 2023 թ

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Ներառական կրթության իրականացումը Հայաստանի Հանրապետությունում, իրավական հիմքերը 5

Գլուխ 2. Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտում 8

Գլուխ 3. Ուսումնադաստիարակչական աշխատանքների ճշգրիտ կազմակերպում 13

Եզրակացություն 20

Գրականության ցանկ 21

Ներածություն

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կարևորագույն խնդիրն է՝ ձևավորել և զարգացնել նախադպրոցական կրթական չափորոշիչներին ու կրթական ծրագրային պահանջներին համապատասխան երեխաների գիտելիքների, կարողությունների, հմտությունների, անձի ներդաշնակ զարգացման համապատասխան մակարդակ։

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում, համաշխարհային փորձին ընդառաջ, ներդրվեց համընդհանուր ներառական կրթությունը։ Կրթական համակարգում վերջին տարիներին իրականացվող տարբեր բարեփոխումները նպատակաուղղված են համընդհանուր ներառման գործընթացի ներդրմանը, կայացմանը և արդյունավետության բարձրացմանը։

Ներառական կրթության ներդրման շուրջ 20 տարիների ընթացքում իրականացված աշխատանքների արդյունքում՝ զարգացման առանձնահատկություններ ունեցող անձինք այլևս մեկուսացված չեն և աստիճանաբար հաղթահարվում է ներառականության «բժշկական մոդել» մոտեցումը։

Հայաստանի Հանրապետությունում ներառական կրթական համակարգը սկզբից ներդրվեց դպրոցական կրթության ոլորտում։ Համակարգի ամբողջականությունն ու շարունակականությունն ապահովելու համար համընդհանուր ներառման գործընթացը ներդրվեց նաև նախադպրոցական ուսումնական հաստատություններում։ Նախադպրոցական համընդհանուր ներառական կրթության գործընթացը նախատեսվում էր իրականացնել 2021-2023թթ.՝ համաձայն ՀՀ կառավարության հաստատած գործողությունների պլանի և ժամանակացույցի։

Հետազոտական աշխատանքի թեման է՝ սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտում և ուսումնադաստիարակչական աշխատանքների ճշգրիտ կազմակերպում։

Հետազոտական աշխատանքի նպատակն է վերլուծել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման առանձնահատկությունները նախադպրոցական ուսումնական հաստատությունում, ինչպես նաև ճշգրիտ կազմակերպել ուսումնադաստիարակչական աշխատանքները։

Թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կրթական համակարգում համընդհանուր ներառման գործընթացը դեռևս կայացման փուլում է և նախադպրոցական ուսումնական հաստատություններում դեռևս ամբողջությամբ ներդրված չէ։

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, 3 գլխից, եզրակացությունից և գրականության ցանկից։

Գլուխ 1. Ներառական կրթության իրականացումը Հայաստանի Հանրապետությունում, իրավական հիմքերը

Ներառական կրթությունը կրթական համակարգ է, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածության ապահովմանը: Ներառական կրթությունը ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար:

Մարդկության զարգացման ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ձևավորումն ու սահմանումն անցել են երկար ճանապարհ՝ խղճահարությունից մինչև սոցիալական բազմաթիվ ծառայությունների մատուցում: Այսօր աշխարհն արդեն ընդունում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գաղափարը:

Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականին վավերացնելով ՄԱԿ-ի 2006 թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, ստանձնել է միջազգային պարտավորություն՝ գործող օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներից բխող պահանջներին: (https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6):

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը: (https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu),

(https://www.arlis.am/documentview.aspx?docid=94683

ՀՀ-ում «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքն ընդունվեց 2005թ. նոյեմբերի 15-ին: Վերջինս կանոնակարգեց ոլորտի գործունեությունը և ապահովեց

նախադպրոցական կրթության ծառայությունների մատչելիության շարունակականության համար իրավական հիմքերը: Հաշվի առնելով ՀՀ-ում համընդհանուր ներառական կրթության ներդրման քաղաքականությունը՝ 2020թ. մայիսի 6-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց ««Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքը, որի համաձայն արձանագրվեցին նախադպրոցական կրթության ոլորտի զարգացմանը և կանոնակարգմանը վերաբերող մի շարք հոդվածներ, օրինակ՝ 1, 3, 5, 7, 8, 9, համաձայն որոնց՝ սահմանվեցին ՀՀ նախադպրոցական կրթության բնագավառում բոլորի համար հավասար նախադպրոցական կրթության իրավունքի իրացումը, նախադպրոցական կրթության հասանելիության և մատչելիության հիմքերը: Նույն օրենքի համաձայն՝ նախատեսվում է ՀՀ-ում ներդնել նախադպրոցական համընդհանուր ներառական կրթություն: Այս գործընթացը նախատեսվում է իրականացնել 2021-2023թթ.՝ համաձայն ՀՀ կառավարության հաստատած գործողությունների պլանի և ժամանակացույցի: (Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում, մեթոդական ուղեցույց, ՀՄԿ, Երևան 2020 թ., էջ 12):

Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի

- **Ներառական կրթությունը՝** յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է: https://www.arlis.am/documentview.aspx?docid=94683
- **Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմաններ՝** յուրաքանչյուր երեխայի նախադպրոցական կրթական

ծրագրի յուրացմանը նպատակաուղղված զարգացման և ուսուցման մեթոդների, անհատական ուսուցման, տեխնիկական միջոցների, այդ թվում՝ աջակցող տեխնոլոգիաների, միջավայրի, ինչպես նաև մանկավարժահոգեբանական, սոցիալական և այլ ծառայությունների ամբողջություն.

- **Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա՝** սան, որի նախադպրոցական կրթության և զարգացման համար անհրաժեշտ են կրթության և զարգացման առանձնահատուկ պայմաններ.
  https://www.arlis.am/documentview.aspx?docid=142606

Գլուխ 2. Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտում

Նախադպրոցական կրթության պայմաններում շատ կարևոր է երեխաներին դիտարկելը: Հետաքրքրությամբ և ուշադրությամբ երեխաներին դիտելը և լսելը թույլ է տալիս ավելին իմանալ նրանց մասին: Հատկապես այս տարիքում շատ կարևոր է հասկանալ, թե ինչն է մղում երեխային սովորել և զարգանալ: Դիտարկումը հաճախ դիտվում է որպես նախադպրոցական տարիքի երեխաների գնահատման ամենապարզ, բայց ամենաարդյունավետ մեթոդներից մեկը: Մանկավարժի համար երեխային դիտարկելը սկսվում է այն բանից, թե ինչպես է յուրաքանչյուր երեխա վարվում, սովորում, արձագանքում նոր իրավիճակներին և փոխազդում ուրիշների հետ: Այս տեղեկատվությունը կարևոր է, քանի որ այն օգնում է մանկավարժներին բարելավել իրենց պարապմունքները՝ բավարարելով փոքրիկ սովորողների կարիքները: Դիտարկումը թույլ է տալիս հասկանալ, թե ինչն է հետաքրքրում երեխային և ինչպես է նա սովորում: Այսպիսով՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժները դիտարկում և բացահայտում են երեխաների կարողություններն ու հնարավորությունները նրանց կարիքները գնահատելու, զարգացումը խթանելու, և, որ ամենակարևորն է, կրթությանն աջակցելու համար:

Ներառական կրթության համատեքստում կիրառվելու է երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ

- նախադպրոցական,
- տարածքային
- հանրապետական:

Օրենքի կիրարկման արդյունքում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին մանկավարժահոգեբանական աջակցությունը ևս կտրամադրվի 3 մակարդակներում՝ նախադպրոցական, տարածքային և հանրապետական :

Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասն է կազմում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը, որն իրականացվում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու համար: Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը երեխայի նախադպրոցական կրթական ծրագրերին մասնակցության դիտարկումն է, երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտումը, կրթության և զարգացման համար անհրաժեշտ առանձնահատուկ պայմանների սահմանումը:

Գնահատումն իրականացվում է երկու փուլով.

1. Նախադպրոցական մակարդակի գնահատում, որն իրականացվում է հաստատության մանկավարժների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից՝ բացահայտելու կրթության գործընթացում երեխայի արդյունավետ մասնակցության սահմանափակումները, դրանք առաջացնող միջավայրային խոչընդոտող գործոնները և դրանց հաղթահարման խթանիչ գործոնները:
2. Տարածքային մակարդակի գնահատում, որն իրականացվում է Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի (այսուհետ՝ ՏՄԱԿ) կողմից՝ որոշելու երեխայի մոտ կրթության առանձնահատուկ պայմանի կարիքը՝ պայմանավորված գործունեության և մասնակցության այս կամ այն խանգարմամբ:

Նախադպրոցական մակարդակի գնահատումը սկսվում է մանկավարժի դիտարկումով, որը տեղի է ունենում երեխայի բնականոն միջավայրում՝ պարապմունքների ընթացքում, խաղերի, միջոցառումների ժամանակ:

Մանկավարժը՝ որպես դիտարկում իրականացնող գլխավոր անձ, համագործակցելով նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության խմբի և երեխայի ծնողների հետ, որոշակի ժամանակահատվածում դիտարկման մեթոդի միջոցով հավաքագրում է համապատասխան տեղեկատվություն երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, անձնային որակների, կարիքների ու դժվարությունների, ուժեղ կողմերի, հասակակիցների հետ փոխհարաբերությունների և այլնի մասին: Ինչպես արդեն նշել ենք, երեխայի հնարավորությունների, կարիքների և զարգացման առկա մակարդակի դիտարկումը շատ կարևոր է նրա հետագա ուսումնառությունը պլանավորելու և կազմակերպելու համար:

Եթե երեխայի նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքների վերլուծությունը չի հանգում երեխայի մոտ գործունեության և մասնակցության որևէ խանգարման, բայց երեխան մեկ կամ մի քանի ոլորտներում ունի թեթև դժվարություններ, ապա մանկավարժահոգեբանական աջակցության խումբը մշակում է «Կանխարգելիչ միջամտությունների պլան» ծառայությունների տրամադրման և միջավայրային հարմարեցումների վերաբերյալ (նպատակներ և դեպի այդ նպատակները տանող քայլեր, դասավանդման մեթոդներ, տեղի և խաղասենյակի վերադասավորումներ, ժամանակի կազմակերպում և այլն):

Եթե երեխայի գնահատման արդյունքների վերլուծությունը վկայում է երեխայի գործունեության և մասնակցության որևէ խանգարման հավանականություն, ապա նախադպրոցական ուսումնական հաստատությունը ծնողի համաձայնության առկայությամբ դիմում է ՏՄԱԿ-ին երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի տարածքային մակարդակի գնահատում իրականացնելու նպատակով:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը նրա զարգացման հնարավորությունների բացահայտման և կրթության կազմակերպման նպատակով իրականացնում են ՏՄԱԿ-ները՝ մանկավարժահոգեբանական

գնահատման չափանիշների համաձայն: Գնահատման արդյունքում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխային տրամադրվում են նախադպրոցական կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ՝ համաձայն Անհատական ուսուցման և զարգացման պլանի (ԱՈՒԶՊ):

Նշված համակարգի շնորհիվ ապահովվում է յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի սահուն անցումը նախադպրոցական կրթության համակարգից դպրոցական համակարգ: Ողորտում իրականացվող քաղաքականության արդյունքում նախատեսվում է ընդլայնել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որակյալ կրթություն ստանալու հնարավորությունները նախադպրոցական ուսումնական հաստատություններում, որը ենթադրում է երեխաների կողմից համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերում ապրելու, հասարակության մեջ լիարժեք դրսևորվելու և սահուն ու բարեհաջող դպրոցական կրթությանն անցնելու համար: Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին նախադպրոցական կրթության մեջ ներառման և նախադպրոցական կրթությունից դուրս մնալու հարցերում խիստ կարևոր է շահագրգիռ կառույցների հետ համագործակցությունը, ինչը թույլ կտա ոչ միայն վաղ հայտնաբերել այս երեխաներին, այլև նրանց հնարավորիս շուտ ընդգրկել կրթական գործընթացում՝ կանխարգելելով զարգացման հետագա դժվարությունների և խնդիրների առաջացումը: Այս համատեքստում կարևոր է առողջության առաջնային պահպանման կազմակերպությունների (մանկական պոլիկլինիկա), սոցիալական ծառայությունների հետ սերտ համագործակցությունը:

Նախադպրոցական ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար իր զարգացման առանձնահատկություններին համապատասխան անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական

գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:

Ներառական կրթությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում ենթադրում է, որ երեխաներն ընդունեն և արժևորեն բազմազանությունը հենց մանկուց, որն էլ իր հերթին հիմք կհանդիսանա ներառական հասարակության ձևավորման համար: Այս նկատառումից ելնելով՝ կարևոր է, որ ՆՈՒՀ-երի մանկավարժները և բոլոր աշխատակիցները հստակ պատկերացնեն և ընդունեն «բազմազանություն» հասկացությունը: Գաղտնիք չէ, որ առանց ամուր հիմքի չի կարող լինել վստահելի կառույց: Ներառականության համատեքստում այս հիմքը նախադպրոցական կրթությունն է: (Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում, մեթոդական ուղեցույց, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան 2020 թ., էջ 9-17), (https://www.arlis.am/documentview.aspx?docid=168480)

Գլուխ 3. Ուսումնադաստիարակչական աշխատանքների ճշգրիտ կազմակերպում

Մանկապարտեզային կյանքի շարժիչ ուժերը՝ որպես մանկական համայնքի կազմակերպիչներ, դաստիարակներն են։ Դաստիարակը ղեկավարվում է ծրագրով և այն կենսագործում է պլանավորման միջոցով։ Դաստիարակն իր մեջ պետք է միավորի և՛ դիտողի, և՛ մանկավարժի գործառույթները, որոնք անբաժանելի են միմյանցից։ Դաստիարակի հիմնական խնդիրը առաջադրանքների լուծման ճանապարհին կողմնորոշվելն է, քանի որ այդ խնդիրներն ուղղորդված են երեխաների զարգացմանը, առաջարկվող բովանդակության ըմբռնմանը։ (Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Հ. Միտոյան, Լ. Սմբատյան, Երևան, 2010 թ. էջ122-124)։

Երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների պլանավորման սկզբունքներ են՝

- որոշել երեխաների ուսումնական բեռնվածության օպտիմալ տարբերակը,
- կանոնակարգային պահերին հաշվի առնել ներկայացվող պահանջները՝ պահպանելով հաջորդականությունը, տևողությունը, տարբեր գործընթացների անցկացման առանձնահատկությունները,
- ապահովել երեխաների համար հատուկ կազմակերպված և ինքնուրույն գործունեության հերթագայումը,
- պարտադիր ժամանակ հատկացնել ազատ խաղերին,
- հաշվի առնել երեխաների զարգացման մակարդակը
- հաշվի առնել երեխաների դիտարկման արդյունքները շաբաթական պարապմունքների պլանավորման և համակցման ժամանակ,
- հաշվի առնել երեխաների զարգացման մակարդակը, դիտարկման արդյունքները օգտագործել կրթական գործընթացի օպտիմալացման, անհատական աշխատանքի պլանավորման ժամանակ,

- ապահովել դաստիարակության, ուսուցման և զարգացման գործընթացի փոխադարձ կապը,
- ապահովել դաստիարակչական ներգործության հետևողականությունը, կրկնությունը, պարբերականությունը,
- կիրառել գործունեության տարբեր տարրեր՝ երեխաների հուզական բարենպաստության, տրամադրության բարձրացման նպատակով,
- պլանավորման գործունեությունն իրականացնել երեխաների հետ աշխատող բազմամասնագետ կադրերի ջանքերի ինտեգրմամբ՝ հաշվի առնելով նրանց խորհուրդները,
- ներառել ծնողների հետ տարվող աշխատանքը։ (Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, ՊՐԱԿ II, Հ. Միտոյան, էջ 9)։

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացում կարևոր են հարմարեցումները՝

1. *Սոցիալական միջավայրի հարմարեցումներ*

   Պետք է ստեղծվեն սոցիալական միջավայրին համապատասխան պայմաններ, որոնք հասանելի կլինեն բոլոր երեխաներին հիմնական միջավայրերում՝ ընտանիքում, ուսումնական հաստատությունում և այլն։ Ցանկալի գործողություններում ընդգրկվելու համար ճիշտ ընտրված և անհրաժեշտ աջակցություն ունենալը նպաստում է ոչ միայն սոցիալական միջավայրում ներառմանը, այլև՝ ուսման առաջընթացին։ Սա չի նշանակում, որ բոլոր սովորողներից պետք է հավասար ակնկալիքներ ունենալ, դրանք պետք է լինեն ըստ կարողությունների՝ բոլորին տալով մասնակցելու հնարավորություն։

2. *Մատչելի ֆիզիկական միջավայր ուսումնական հաստատությունում*

   Անդրադառնալով ուսումնական հաստատության ֆիզիկական միջավայրին՝ կարևոր է անդրադարձ կատարել ընդհանրական միջավայրի համընդհանուր ձևավորման (ունիվերսալ դիզայն) հասկացությանը, որի հիմնական նպատակն է ստեղծել միջավայր բոլորի համար՝ հնարավորություն տալով

յուրաքանչյուրին անարգել շարժվել և մասնակցություն ունենալ ֆիզիկական միջավայրում:

3. *Ուսումնական գործընթացի հարմարեցումներ*

- Լրացուցիչ ժամանակ տրամադրել երեխային՝ հանձնարարությունն ավարտելու համար:
- Խմբասենյակում հաստատել ամենօրյա գործողությունների օրակարգ (հետևողականորեն պահպանվող կարգուկանոնը շատ կարևոր է երեխայի սովորելու համար) :
- Ապահովել վիզուալ կամ տպագիր նյութերով, որպեսզի օգնենք երեխային՝ հասկանալ բանավոր ասված հանձնարարությունները:
- Հանձնարարությունը կրկնել կամ հստակեցնել, կամ էլ՝ պարզեցնել:
- Հանձնարարությունն առանձին կարդալ տվյալ երեխայի համար:
- Հանձնարարությունը բաժանել քայլերի
- Հուշող նշումներ կատարել (օրինակ՝ սլաք, որը ցույց է տալիս՝ որտեղի՞ց սկսել, որտե՞ղ ավարտել կամ որտեղի՞ց շարունակել, կամ որը ցույց է տալիս պատճառահետևանքային կապը):
- Ժամանակ առ ժամանակ հիշեցնել սովորողին՝ հանձնարարությունը կատարելու մասին:
- Մի գործողությունից մեկ այլ գործողությանն անցնելիս՝ հրավիրել սովորողի ուշադրությունը:
- Հանձնարարություն տալիս օգտագործել նաև ժեստեր:
- Արտահայտել բանավոր քաջալերանք, գովեստ կամ խրախուսանք:
- Օգտագործել հաստ մատիտ
- Մշակել օրվա հստակ կանոնակարգը (երեխայի վարքագիծը կառավարելու համար):
- Սահմանել հստակ կանոններ (հստակ սահմանել, թե նա ի՛նչ պետք է անի և ինչ չպետք է անի):

- Օգտագործել ոչ վերբալ նշանների համակարգ՝ վատ վարքագծի դեպքում սովորողին հիշեցնելու և կարգի հրավիրելու համար։
- Թույլ տալ, որ երեխան սպառի իր ֆիզիկական ակտիվությունը,
- Ավելի շատ խրախուսել լավ արարքների համար, քան պատժել վատի համար,
- Ոչ շատ վտանգավոր կամ վատ վարքագիծը անտեսել։
- Քննադատության մեջ լինել հետևողական և դրական տրամադրվածությամբ (Արդյունավետ հարմարեցումներ, որակյալ կրթություն, մեթոդական ուղեցույց, Երևան, ՀՄԿ, 2022 թ.)։

Հայտնի է, որ խաղը նախադպրոցական տարիքի երեխաների առաջատար գործունեությունն է, և երեխան առավելագույնս զարգանում է խաղի ընթացքում։

Խաղի միջոցով զարգանում են երեխայի՝

- շարժողական ոլորտը (շարժումների համաչափություն, մանր շարժունակություն, ճարպկություն)
- հուզական ոլորտը (ապրումակցում, իքնակառավարում, ինքնաճանաչում),
- սոցիալական հմտությունները (համագործակցություն, սոցիալականացում, հաղորդակցում),
- մտավոր կարողությունները (մտածողություն, ուշադրություն, ստեղծագործականություն, ուսումնասիրելու կարողություններ)։ (Բարդ իրավիճակների պարզ լուծումներ, Ա. Ավագյան, Լ. Բաբայան, Մ. Հովհաննիսյան, Թ. Մակարյան, Ա. Մանուկյան, Մ. Մարության, Ս. Պետրոսյան, Երևան, 2020 թ., էջ 4)

Ընտանիքի հետ իրականացվող ուղղակի կամ անուղղակի որևէ աշխատանքի նպատակը բնականաբար, ծնողական հմտությունների զարգացումն է և ընտանիքի ջանքերն ի նպաստ երեխայի զարգացմանն ուղղելը։ Կարծում ենք՝ այս տեսանկյունից աշխատանքը հատկապես արդյունավետ կլինի, եթե ընտանիքի հետ իրականացվող աշխատանքի ընթացքում ծնողներին տրամադրվող մանկավարժական խորհրդատվությունը ներառի մի շարք կարևոր հարցեր.

- Օգնեք ծնողներին հաշվի առնել երեխայի հոգեկան գործընթացների առանձնահատկությունները: Կարևորեք այն հանգամանքը, որ կարիք չկա անընդհատ համեմատելու երեխային իր հասակակիցների հետ, և զարմանալու ու նյարդայնանալու, թե ինչո՛ւ վերջիններս «դա» արդեն կարող են անել (ճանաչել գույները, խոսել, հաշվել, նկարել, գրել և այլն), իսկ ձեր երեխան՝ դեռ ոչ: Խոսեք նրանց հետ այն մասին, որ երեխայի հոգեկան գործընթացները՝ զգայությունները, հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը, երևակայությունը, խոսքն ունեն իրենց առանձնահատկությունները, և դրանց զարգացումը հնարավոր էմիայն այդ առանձնահատկությունների շրջանակում:
- Կարևորեք այն հանգամանքը, որ ծնողները հաշվի առնեն իրենց երեխայի հնարավորություններն ու զարգացման մակարդակը: Այս առումով ճիշտ ընտրություն կատարելը շատ կարևոր է: Հուշեք ծնողներին, որ նախ և առաջ անհրաժեշտ է ընտրել գործունեության այնպիսի ձևեր և միջոցներ, որոնցով երեխան կարող է հաջողության հասնել: Երեխան հեշտությամբ կկարողանա յուրացնել նոր հմտությունները, եթե դրանց յուրացման ընթացքն իրականացվի քայլ առ քայլ: Այդ իսկ պատճառով, որևէ նոր հմտություն ձևավորելիս սկզբում անհրաժեշտ է օգտագործել պարզ և հեշտ առաջադրանքներ, աստիճանաբար բարձրացնելով դրանց բարդության մակարդակը: Առաջարկեք ծնողներին, հատուկ ուշադրություն հատկացնել երեխայի անգամ ամենաչնչին ձեռքբերումներին, խրախուսել երեխային նույնիսկ անհաջող փորձերի դեպքում և գովել՝ամեն անգամ, երբ նա ունենում է որևէ նոր ձեռքբերում : Խոսեք ծնողների հետ այն մասին, թե որքան կարևոր է հաշվի առնել երեխայի հետաքրքրությունները, քանզի այն, ինչ հետաքրքրական է, շուտ է յուրացվում: Ծնողները կարող են երեխային գործունեության մղելու համար դրդապատճառ գտնել՝ ելնելով նրա հակումներից և հետաքրքրություններից: Առօրյա կյանքը բազմաթիվ հնարավորություններ է տալիս մեզ այս կամ այն հմտությունը

ձևավորելու համար, և հաջողությունն արդեն կախված է նրանից, թե որքանով արդյունավետ ու հարմար ձև կգտնենք դա անելու համար:

- Օգնեք ծնողներին սովորել պահպանել գործողությունների ճիշտ հաջորդականություն: Գոյություն ունեն երկու օգտակար մեթոդներ, որոնք կոչվում են «ուղիղ հաջորդականություն» « և հակառակ հաջորդականություն»: Յուրաքանչյուր ներգործություն կարելի է պատկերացնել շղթայի կամ փոքրիկ քայլերից կազմված հաջորդականության տեսքով: «Ուղիղ հաջորդականության» դեպքում մենք խրախուսում ենք երեխային կատարելու շղթայի առաջին քայլը և գործողությունն ավարտում ենք ինքներս, իսկ «հակառակ հաջորդականության» դեպքում երեխան ավարտում է գործողությունը, որը մենք էինք սկսել: Օրինակ՝ երբ ուզում եք երեխային լվացվել սովորեցնել, կարող եք օգտագործել «ուղիղ հաջորդականությունը». թող երեխան ինքը պահի ձեռքերը ուղիղ ջրի շիթի տակ, իսկ դուք բռնե՛ք նրա ձեռքերը և կատարեք մնացած գործողությունները: Իսկ ահա խճանկար հավաքելիս ավելի հարմար կլինի «հակառակ հաջորդականությունը»: Շարե՛ք խճանկարի բոլոր մասերը՝ բացի վերջինից: Թող երեխան ինքը դնի վերջին, պակասող պատկերը և վայելի ամբողջական պատկերը ստանալու բերկրանքը:
- Խոսեք ծնողների հետ այն մասին, թե որքան կարևոր է հաշվի առնել երեխայի հետաքրքրությունները, քանզի այն, ինչ հետաքրքրական է, շուտ է յուրացվում: Ծնողները կարող են երեխային գործունեության մղելու համար դրդապատճառ գտնել՝ ելնելով նրա հակումներից և հետաքրքրություններից: Առօրյա կյանքը բազմաթիվ հնարավորություններ է տալիս մեզ այս կամ այն հմտությունը ձևավորելու համար, և հաջողությունն արդեն կախված է նրանից, թե որքանով արդյունավետ ու հարմար ձև կգտնենք դա անելու համար:
- Առաջարկեք ծնողներին, հատուկ ուշադրություն հատկացնել երեխայի անգամ ամենաչնչին ձեռքբերումներին, խրախուսել երեխային նույնիսկ անհաջող

փորձերի դեպքում և գովել՝ամեն անգամ, երբ նա ունենում է որևէ նոր ձեռքբերում :

- Խրախուսեք ծնողներին կանգ չառնելու մեկ ձեռքբերման վրա: Ծնողները երբեմն սևեռում են ուշադրությունը կոնկրետ հմտության կամ կարողության ձևավորման վրա՝ անտեսելով մի շարք այլ, ոչ պակաս կարևորները: Իհարկե՝ դա կարող է ունենալ իր օբյեկտիվ պատճառները (օրինակ՝ երբ շրջապատողներն անընդհատ հարցնում են. «Դե ինչ, նա դեռ չի քայլում (կամ դեռ չի խոսում)): » Այնուամենայնիվ՝ նման կենտրոնացումը վնասակար է երեխայի համար: Առաջին հերթին այն պատճառով, որ այդ դեպքում մենք մոռանում ենք մյուս հմտությունների կամ կարողությունների մասին, որոնք պակաս կարևոր չեն երեխայի ամբողջական զարգացման համար: Երկրորդ՝ երեխան ամբողջական անձ է և պետք է զարգանա որպեսմեկ ամբողջություն: Հաճախ հիշեցրեք ծնողներին սեփական երեխային զգալու կարևորության մասին: Երբ ծնողն աշխատում է իր երեխային զարգացնելու ուղղությամբ, միշտ վտանգ կա, որ, տարվելով այդ գործընթացով, երեխայի հաջողություններով, հասակակիցների հետ համեմատություններով և այլն, ծնողները կարող են մոռանալ իրենց երեխայի, որպես սիրո և ջերմության կարիք զգացող էակի, մասին: Կարևոր է, որ երեխայի առաջընթացն ու հաջողությունները (անհաջողություններն՝ առավել ևս) ոչ մի դեպքում չնույնացվեն երեխայի հետ: Առաջարկեք ծնողներին խաղալ երեխայի հետ այն խաղերը, որ նրան դուր են գալիս, կրկնել նրա գործողությունները, մտնել նրա աշխարհ և փորձել հասկանալ, թե ի'նչ է նա ուզում, ինչի' է ձգտում, ի՛նչ տրամադրություն և հույզեր ունի, զերծ մնալով երեխային ամեն կերպ մեր ընկալումների, պատկերացումների, դատողությունների, ցանկությունների և սպասումների աշխարհ մտցնելուց: (Բարդ իրավիճակների պարզ լուծումներ, Ա. Ավագյան, Լ. Բաբայան, Մ. Հովհաննիսյան, Թ. Մակարյան, Ա. Մանուկյան, Մ. Մարության, Ս. Պետրոսյան, Երևան, 2020 թ., էջ 113-115

Եզրակացություն

Համապատասխան գրականության վերլուծության արդյունքում եկանք հետևյալ եզրահանգման՝

- Հայաստանի Հանրապետությունում արդեն շուրջ 20 տարի իրականացվող ներառական կրթության համակարգը դեռևս զարգացման, կայունացման փուլում է: Հանրակրթության ոլորտում համընդհանուր ներառման գործընթացն ամբողջականացնելու համար՝ 2020 թ.-ին օրենքով ամրագրվեց նաև նախադպրոցական ոլորտում ներառական կրթության ներդնումը:
- Համընդհանուր ներառման գործընթացի կայացման համար խիստ կարևոր է յուրաքանչյուր մանկավարժի ներդրումն ու պատասխանատու մոտեցումը, սովորելու, իր փորձով կիսվելու, գործընկերների և ծնողների հետ համագործակցելու կարողությունը :
- Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտումը մանկավարժի գործունեության առանցքային կետերից է, քանի որ միայն դրա շնորհիվ մանկավարժը կկարողանա ճիշտ գնահատել յուրաքանչյուր սանի հնարավորությունները և ապահովել արդյունավետ ուսումնադաստիարակչական գործընթաց:
- Քանի որ նախադպրոցական տարիքի երեխայի առաջատար գործունեության տեսակը խաղն է՝ այդ պատճառով մանկավարժը պետք է պարապմունքների ընթացքում ճկուն կազմակերպի խաղային գործունեությունն այնպես, որ երեխային հասանելի դարձնի նախադպրոցական կրթական չափորոշչով և կրթական ծրագրով նախատեսված վերջնարդյունքները:
- Անչափ կարևոր է ՆՈՒՀ-ծնող արդյունավետ համագործակցությունը: Մանկավարժը հատուկ ուշադրություն պետք է դարձնի նաև ծնողների հետ աշխատանքին՝ նրանց համար հասանելի դարձնելու մանկավարժահոգեբանական գիտելիքներ:

Գրականության ցանկ

1. Արդյունավետ հարմարեցումներ, որակյալ կրթություն, մեթոդական ուղեցույց, Երևան, ՀՄԿ, 2022 թ. 143 էջ։
2. Բարդ իրավիճակների պարզ լուծումներ, Ա. Ավագյան, Լ. Բաբայան, Մ. Հովհաննիսյան, Թ. Մակարյան, Ա. Մանուկյան, Մ. Մարության, Ս. Պետրոսյան, Երևան, 2020 թ., 132 էջ։
3. Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում, մեթոդական ուղեցույց, հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան, 2020 թ., 187 էջ։
4. Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, ՊՐԱԿ II, Հ. Միտոյան, «Մարի հրատարակչություն, Երևան, 2020 թ. 143 էջ։
5. Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Հ. Միտոյան, Լ. Սմբատյան, Երևան, 2010 թ. 223 էջ։
6. https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6
7. https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu
8. https://www.arlis.am/documentview.aspx?docid=94683
   «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
9. https://www.arlis.am/documentview.aspx?docid=142606
   «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք
10. https://www.arlis.am/documentview.aspx?docid=168480
    0-6 Տարեկան երեխաների կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը սահմանելու մասին։